2026 թվականի մարտ 24
ՀՀ, ք. Երևան

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացի Ալեքսան Ալեքսանյանից

ԻՐԱԶԵԿՈՒՄ
/հանրային հավաքի անցկացման վերաբերյալ/

Հարգելի՛ պարոն Ավինյան,

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

1. Հավաքի վայրը՝ ՀՀ, քաղաք Երևան, Ազատության հրապարակ
2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2026 թվականի ապրիլի 11-ին ժամը 17:00-22:00
3. Հավաքի նպատակը՝ Հայաստանի Հանրապետության ներքաղաքական և նախընտրական հարցերի քննարկում:
4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 30.000 /երեսուն հազար/ անձ:
5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ Հավաքների ազատության սահմանադրական իրավունքի իրացման ամենաարդյունավետ և նույնիսկ հենց Սահմանադրությամբ հիշատակված բաթոթյա տարածքում տվյալ դեպքում իրազեկման ենթակա հավաքը իրացվելու է նաև անհրաժեշտ սարքավորումների ապահովմամբ՝ դրանով հավաքի կազմակերպվածության երաշխավորմամբ: Մասնավորապես հնարավոր է տեղադրվի՝ բեմահարթակ, կոնստրուկցիաներ, բարձրախոսներ, ձայնի ուժեղարարներ, թմբուկներ, լեդ էկրան, տրանսպորտային միջոցներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխ և այլ տեխնիկական սարքեր: Հնարավոր է տեղի ունենան ելույթներ, հնչի հանրային խոսք
6. Հավաքին կարգադրիչներ չեն լինի:

7. Հավաքի ընթացքում (19:00-21:00) նախատեսվում է երթ՝ Ազատության հրապարակ – Մաշտոցի պողոտա – Սայաթ–Նովա փողոց – Կորյուն փողոց – Աբովյան փողոց – Թումանյան փողոց – Հյուսիսային պողոտա – Աբովյան փողոց – Հանրապետության հրապարակ – Վազգեն Սարգսյան փողոց – Իտալիայի փողոց – Գրիգոր Լուսավորիչ փողոց – Մաշտոցի պողոտա – Սայաթ–Նովա փողոց – Ազատության հրապարակ:

8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝ Ազգանուն Անուն Հայրանուն՝ Ալեքսան Բենիամինի Ալեքսանյան

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հավաքը իրազեկման մեջ նշված ժամանակում և վայրում այլ, ներառյալ՝ հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումն ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումների սահմանելու համար, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ: Տվյալ դեպքում ըստ ունեցած նախնական տվյալների այդ օրը նախատեսված չէ որևէ այլ անձի կողմից համապատասխան վայրում հանրային հավաք:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Սույն իրազեկումը ընդունել ի գիտություն:

Կից ներկայացնում եմ անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը:

ՀԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ **ԱԼԵՔՍԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

24/03/2026թ.